ՓԱՐԻԶԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀ ԴԱՐՁԱԾ ՀԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

10.05.2017 21:27

2017 թվականի մայիսի 3-ին Փարիզի փաստաբանական դպրոցում տեղի է ունեցել հայ նշանավոր գրող, քաղաքագետ, փաստաբան Գրիգոր Զոհրապի և Հայոց Ցեղասպանության զոհ դարձած այլ հայ փաստաբանների հիշատակին նվիրված հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը:

ՀՀ փաստաբանների պալատը միջոցառմանը ներկայացնում էին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի միջազգային հարաբերությունների գծով խորհրդական Մարտուն Փանոսյանը և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը:

Փարիզի փաստաբանների միության նախագահ Ֆրեդերիկ Սիկարը իր ելույթում ընդգծել է հուշատախտակի տեղադրման կարևորությունը՝ նշելով, որ այդպիսով հարգանքի տուրք է մատուցվում բոլոր այն Հայ փաստաբաններին, ովքեր զոհվել են միայն ազգությամբ հայ և փաստաբան լինելու համար:

«ԱՍԱԼԱ» խմբավորման անդամների պաշտպանությունը ստանձնած փաստաբան Անրի Լյոկլերը իր ելույթի ընթացքում ընդգծել է հուշատախտակի տեղադրման կարևորությունը ապագա սերունդների համար, մասնավորապես նրա խոսքերով Փարիզի փաստաբանական դպրոցում նշված հուշատախտակի տեղադրումը կարևոր է այնտեղ ուսուցանող ունկնդիրների համար, քանի որ ուսումնառության ամբողջ գործընթացում նրանք կտեսնեն այն:

ՀՀ փաստաբանների պալատի պատվիրակությունն իր երախտագիտությունն է հայտնել միջոցառման բոլոր կազմակերպիչներին՝ հատուկ ընդգծելով երկու երկրների փաստաբանական համայնքների միջև առկա գործընկերային և բարեկամական հարաբերությունների բարձր մակարդակը:

Ի թիվս այլ հյուրերի, միջոցառմանը ներկա էին Ֆրանսիայի Օ-դը-Սեն նահանգի նախագահ, նախկինում փաստաբան Պատրիկ Դեվեդջյանը, Իսսի լե Մուլինո քաղաքի քաղաքապետ Անդրե Սանտինին, Ֆրանսիայի Հանրապետությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վիգեն Չիտեչյանը, Ֆրանսիական Հանրապետության Սենատի անդամ, Ֆրանսիա-Հայաստան բարեկամության խմբի նախագահ Ֆիլիպ Կալտենբախը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })